

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի

22.06.2012թ. կայացած

ընդհանուր ժողովում

Արձանագրություն թիվ 03.12.ԸԺ

ընդհանուր ժողովի նախագահ՝



Ա. Ռավթյան

28 հունիսի 2012թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Ձեռնարկությունների Պետական

Ռեգիստրի կողմից *16* 02* 1995թ.

Գրանցման թիվը 264.120.00831

Վկայական 03 Ա 081037

ՀՎՀՀ 00003206

Թիվ-001-3 փոփոխությունը

Գրանցված է իրավաբանական անձանց

Պետական ռեգիստրի տարածքային

բաժնի կողմից



«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. «Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ VII¹ գլխով.

«VII¹ ՇԱՀԱԳՐԳՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

Շահագրգռվածության առկայության դեպքում գործարքը կնքելու մասին որոշումը ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը».

2. «Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության՝

2.1) 45 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«45. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողովը կարող է հրավիրվել միայն ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառապես սույն ենթակետում նշված հարցերով կայացած որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքի:»:

2.2) 47 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվերակության (հարցման) միջոցով: Տարեկան ժողովը, ինչպես նաև կանոնադրության 45 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված արտահերթ ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվերակության (հարցման) միջոցով: Դեռակա կարգով քվերակությունը իրականացվում է համացանցով, Ընկերության էլեկտրոնային փոստին լրացված քվեաթերթիկները PDF ֆայլի տեսքով ուղարկելով:

Դեռակա կարգով քվերակությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվերակությանը մասնակցել է Ընկերության քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Դեռակա կարգով քվերակության ժամանակ ժողովի օրակարգը և քվեաթերթիկները տեղադրվում են Ընկերության ինտերնետային կայքում, լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:»:

2.3) 49 կետում «15» թիվը փոխարինել «21» թվով:

2.4) 56 հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ մասով.

« Բաժնետիրոջ փոխարեն լիազոր ներկայացուցչի մասնակցությունը իրականացվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին տրված, նոտարական կարգով հաստատված լիազորագրով, որով ամրագրվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին փոխանցված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դրանց իրականացման ժամկետները:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ 27.12.1999թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմման օրը 07.06.2011թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
30.05.2011թ. կայացած
ընդհանուր ժողովում

Վերանայություն թիվ 01.11.ԸԺ
ընդհանուր ժողովի նախագահ՝



Ա. Դավթյան

2011թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Ձեռնարկությունների Պետական
Ռեգիստրի կողմից "16" 02 1995թ.

Գրանցման թիվը 264.120.00831

Վկայական 03 Ա 081037 < 4 < 000032 06

Թիվ 008-3 փոփոխությունը

գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Արաբկիրի
տարածքային բաժնի կողմից
"16" 06 2011թ

Արաբկիրի տարածքային բաժնի պետ՝

Խուրդարյան



«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

«Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության՝

1. 62 կետի 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ընկերության դիտորդների խորհրդի քանակական կազմը սահմանվում է 8
(ութ) անդամից:

2. «Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրությունում «տնօրեն» բառը փոխարինել
«գլխավոր տնօրեն» բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ 27.12.1999թ.
գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

Կազման օրը 10.07.2008թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
27.06.2008թ. կայացած
ընդհանուր ժողովում
արձանագրություն թիվ 1.08.ԸԺ
ժողովի նախագահ՝

Ա. Հակոբյան

22. 10. 2008թ.



Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Ձեռնարկությունների Պետական
Ռեգիստրի կողմից "16" 02 1995թ.
Գրանցման թիվը 264.120.00831
Վկայական 03 Ա 081037
Թիվ ~~007~~ - 3 փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Արաբկիրի
տարածքային բաժնի կողմից
"23" 10 2008թ.

Արաբկիրի տարածքային բաժնի պետ՝

Զ. Խորեզադյան



«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

«Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության 11 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

11. Ընկերությունը իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և
հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ու կախյալ
ընկերություններ, Հայաստանի Հանրապետությունում, արտերկրում, մասնավորապես
Տաջիկստանում և մասնակցել նրանցում:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ 27.12.1999թ. գրանցված
նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

23 932 10 08

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի ընդհանուր ժողովում

« 15 » 17 2002թ.

Դիտորդների խորհրդի

նախագահ

Հ. Հակոբյան



«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության

1. 45 կետի ժգ. ենթակետը փոխարինել հետևյալ բովանդակությամբ՝ նոր ենթակետով
 - ժգ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը:
2. 49 կետում «30» թիվը փոխարինել «15» թվով:
3. 59 կետում «15» թիվը փոխարինել «5» թվով:
4. 61 կետի «է» ենթակետը չարադրել հետևյալ խմբագրությամբ
 - է. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը:
5. 61 կետի «Ժք» ենթակետը չարադրել հետևյալ խմբագրությամբ
 - Ժք. Ընկերության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը:
 - Դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում:
6. 61 կետի «Ժը» ենթակետը չարադրել հետևյալ խմբագրությամբ
 - Ժը. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը:
7. 62 կետի առաջին նախադասությունը չարադրել հետևյալ խմբագրությամբ
 - 62. Ընկերության դիտորդների խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:
8. 64 կետում՝
 - ա. «10» թիվը փոխարինել «5» թվով:
 - բ. Վերջին նախադասությունը չարադրել հետևյալ խմբագրությամբ՝
Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության անբաժանելի մասը

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՒԳԻՍՏՐԻ

Արարկիթի տարածքային բաժնում
գրանցման N 26412000831

« 17 » 17 2002թ.

Վկայականի սերիան 01Ս N 008668

Կողմ 0463056

Բաժնի պետ

Վ. Մանյան, Հովհաննիսյան

09 07 02

ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ Է

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի ընդհանուր ժողովում

« 15 » իունիսի 2001թ.

Ղիտորդների խորհրդի
նախագահ



Յ.Հակոբյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

Արաբկիրի տարածքային բաժնում

գրանցման №26412000831

« 28 » 08 2001թ.

Վկայականի սերիան 01Ա №0008668

Կոդը 04630560

Բաժնի պետ

Ն. Մանյի

Ա.Հովհաննիսյան

29.08.01թ.



«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության

- 62 կետի 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 - ընկերության ղիտորդների խորհրդի քանակական կազմը սահմանվում է 12 հոգուց:
- 49 կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 - 49. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձիք, ընդհանուր ժողովի գումարման մասին տեղեկացվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարություն հրապարակելու միջոցով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության անբաժանելի մասը:

30 08 01 932

Կազման օրը 10.07.2008թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական
ընկերության բաժնետերերի
27.06.2008թ. կայացած
ընդհանուր ժողովում
արձանագրություն թիվ 1.08.ԸԺ
ժողովի նախագահ՝



Ա. Հակոբյան

2008թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ 5

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Ձեռնարկությունների Պետական
Ռեգիստրի կողմից 16.02.1995թ.
Գրանցման թիվը 264.120.00831

Վկայական

Թիվ 007-3 փոփոխությունը

գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի Արաբկիրի
տարածքային բաժնի կողմից
21.07 2008թ.

Արաբկիրի տարածքային բաժնի պետ՝




«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»
Բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«Արփա-Սևան» ԲԲԸ կանոնադրության՝

1. 13-րդ կետից հետո լրացնել նոր 13¹ կետ
- 13¹ Հայտարարված բաժնետոմսերի քանակը՝ 400000 հատ, անվանական արժեքը՝ 2500 դրամ:
2. 36-րդ կետը չարդարել հետևյալ խմբագրությամբ
- 36. Շահութաբաժինները վճարվում են ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Արփա-Սևան» ԲԲԸ 04.01.2000թ. գրանցված
նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

„Արփա-Սևան“

բաց բաժնետիրական

ընկերության բաժնետերերի

ընդհանուր ժողովում

« 06 » դեկտեմբերի 1999 թ

խորհրդի նախագահ

24 հոկտեմբեր 2000 թ.

Հ. Հակոբյան



ԳՐԱՏՎԱԾ Է

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

տարածքային բաժնում

գրանցման N 264.120.00831.

27 հոկտեմբեր 1999 թ.

Վաճառված N 0121-008668



Ս. Սեդրեթյան

04.01.2000 թ.

„ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ“

բաց բաժնետիրական ընկերություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. „Արփա-Սևան“, բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. նոյեմբերի 22-ի թիվ 531 որոշման համաձայն:

Ընկերությունը հանդիսանում է ՀՀ էներգետիկայի նախարարության „Արփա-Սևան“, ՓԲԸ /գրանցված Արաբկիրի շրջանում 16.02.95թ./ իրավահաջորդը:

1.2. Կանոնադրության դրույթները համապատասխանեցված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի նորմերի պահանջներին:

I ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- 2.1 Էներգետիկական կառույցների շինարարություն
- 2.2 Նախագծերի հատուկ բաժինների մշակում
- 2.3 Նախապատրաստական աշխատանքներ
- 2.4 Հողային աշխատանքներ
- 2.5 Հատուկ աշխատանքներ բնահողերում
- 2.6 Շենքերի և շինությունների կարկասի կառուցում
- 2.7 Շենքերի և շինությունների ուժեղացում և վերանորոգում
- 2.8 Տրանսպորտային շինարարություն
- 2.9 Ջրային տնտեսության կառույցների շինարարություն
- 2.10 Արտաքին ինժեներական ցանցերի և սարքավորումների իրականացման աշխատանքներ
- 2.11 Ներքին ինժեներական ցանցերի իրականացման աշխատանքներ
- 2.12 Կոնստրուկցիաների և սարքավորումների պահպանման աշխատանքներ
- 2.13 Հորատման և վերանորոգման աշխատանքներ
- 2.14 Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ
- 2.15 Նախագծային, տեխնոլոգիական և շինարարական ինժեներինգ
- 2.16 Միջնորդային աշխատանքներ և ծառայություններ շինարարությունում
- 2.17 Պայթեցման աշխատանքների կատարում
- 2.18 Շինանյութերի կոնստրուկցիաների, շինվածքների արտադրություն
- 2.19 Պարենային ապրանքների առևտուր
- 2.20 Կենցաղային ապրանքների առևտուր

3 Ընկերությունը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած այլ տնտեսական գործունեություն:

4 Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքքնուրույն հաշվեկշիռ, իր անվամբ հայերեն, ռուսերեն, և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային առևտրային և այլ նշաններ: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագիր, իրականացնում է սույն կանոնադրությանը չհակասող գործունեություն, ձեռք է բերում գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում կամ արբիտրաժում, որպես հայցվոր կամ պատասխանող:

5 Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ ընկերության օրենքով և այլ իրավաբանական ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման:

6 Ընկերությունն իր գործունեության համապատասխան իրականացում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը, տնօրինումը և օտարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7 Ընկերությունը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

8 Ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշը շահույթն է:

9 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

10 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար:

11 Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ու կախյալ ընկերություններ և մասնակցել նրանցում:

12 Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

„Արփա-Սևան“, բաց բաժնետիրական ընկերություն

Ընկերության ֆիրմային կրճատ անվանումն է՝

„Արփա-Սևան“, ԲԲԸ

„Арпа–Севан“, АОО

„Arpa–Sevan“, OJSC

Ընկերության գտնվելու վայրն է՝ ք.Երևան Վաղարշյան 20

Ընկերությունը իր կազմում ունի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող արտադրական տեղամասեր:

II ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՆՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

13 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51130000 դրամ, որը կազմում է 20452 հատ սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 2500 դրամ:

14 Ընկերությունը կարող է փոփոխել (մեծացնել կամ փոքրացնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Կանոնադրական կապիտալի փոփոխման կապակցությամբ հայտարարության մեջ պետք է նշված լինեն փոփոխման շարժառիթները, եղանակը, չափերը, աղբյուրները և այլն:

15 Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել՝ ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք՝ առնվազն 30 օրվա ընթացքում:

Բաժնետոմսերի ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի տերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ առնվազն 15 օրվա ընթացքում:

Ընկերությունը կարող է ավելացնել կանոնադրական կապիտալը նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման միջոցով՝ նշելով այդ բաժնետոմսերի վրա դրանց նոր անվանական արժեքը:

16 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը կարող է կատարվել՝

ա . բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

բ . բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում ԶԶ „Բաժնետիրական ընկերությունների մասին“, օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռք բերմամբ և մարմամբ:

Կանոնադրական կապիտալի չափի փոքրացման հետևանքով մեկ տարուց ոչ պակաս ժամկետում ընկերությանը չվերադարձված բաժնետոմսերը կարող են համարվել անվավեր: Դրանց փոխարեն ընկերությունը կարող է թողարկել նոր բաժնետոմսեր:

17 Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման և ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների որակյալ մեծամասնությամբ:

18 Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացում կատարելու մասին որոշում ընդունելու ժամկետից 30 օրվա ընթացքում գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում ընկերությունից պահանջել վերջինիս պարտավորությունների դադարում կամ վաղաժամկետ կատարում և դրա հետ կապված վնասների հատուցում:

19 Կանոնադրական կապիտալի փոքրացման հետ կապված ընկերության կանոնադրության փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետության Պետական ռեգիստրը կատարում է սույն կանոնադրության փոփոխության մասին որոշման ընդունելուց 60 օր հետո և 19 ,18 –րդ կետի համաձայն պարտատերերի առաջացած պահանջների բավարարման դեպքում:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման պատճառով բաժնետերերին վճարումները կատարում են սույն կանոնադրության փոփոխությունները պետական գրանցում կատարելուց հետո:

III ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

20 Ընկերությունը կարող է տեղաբաշխել՝

Ⓣբաժնետոմսեր

Ⓣպարտատոմսեր

Ⓣարժեթերի և արժեթղթերի շրջանառության մասին օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

21 Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել սովորական, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը: Ընկերության կողմից թողարկված սովորական, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքները պետք է լինեն միևնույնը:

22 Ընկերության բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես տպագրական եղանակով, այնպես էլ ընկերության բաժնետերերի ռեգիստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով, որի դեպքում բաժնետերերին տրվում է բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ): Մեկ հավաստագրով ներկայացվում են մեկ տեսակի և ձևի բաժնետոմսեր:

Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

23 Ընկերության բաժնետերերի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը և անվանական արժեքը սահմանված են սույն կանոնադրության 13-րդ կետում:

Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել նյութական արժեքները, արժեթղթերը, մտավորական (արտադրական) սեփականությունը, դրամական միջոցները:

24 Ընկերությունը իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է ընկերության դիտորդների խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված բոլոր պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի մեծությունը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն:

Ընկերությունը կարող է թողարկել՝

Ⓣընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.

Ⓣերրորդ անձանց կողմից տրամադրված ապահովությամբ երաշխավորված պարտատոմսեր.

Ⓣառանց ապահովման պարտատոմսեր, որի թողարկումը թույլատրվում է ընկերության գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն ընկերության առնվազն երկու տարեկան հաշվեկշիռներ:

Պարտատոմսերը կարող են թողարկվել ինչպես անվանական, այնպես էլ ներկայացուցչական: Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի համար պարտադիր վարվում է ռեեստր: Կորցրած անվանական արժեթուղթը վերականգնվում է ընկերության կողմից բնական վճարի դիմաց: Կորցրած ներկայացուցչական պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնման ենթակա չեն:

Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են նարկայացվել վաղաժամկետ մարման:

25 Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում, ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

26 Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, տարեկան տոկոսները պարտատոմսի տիրոջը կարող են չվճարվել, որը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսում:

Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

27 Տպագրական եղանակով պատրաստված պարտատոմսը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28 Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

29 Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի՝

ա. մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ. մասնակցել ընկերության կառավարմանը.

գ. ստանալ շահաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ. առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.

ե. ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն (բացի գաղտնի, հաշվապահական հաշվառման փաստաթղթերից և ընկերության վարչության նիստերի արձանագրություններից).

զ. ընկերության հիմնադիր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է. հանդես գալ առաջարկություններով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում.

ը. ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով.

թ. հայցով դիմել դատարան.

ժ. ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա. ընկերության միջոցների հաշվին ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր.

ժբ. օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը:

30 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերն օգտվում են վերը նշված՝

ա - առանց ձայնի իրավունքի,

գ, դ, ժ - առաջնահերթ իրավունքով,

ը - վերակազմավորման կամ լուծարման հարցերով.

բ, ե, գ, է, թ, ժա, ժբ, - սահմանված սովորական բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն ընկերության բաժնետոմսերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունք ունեն, եթե քննարկվում են ընկերության վերականգնավորման կամ լուծարման հարցերը:

31 Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք չափաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

32 Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 տոկոս կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը:

33 Բաժնետերերը պարտավոր են՝

Ⓣ հետ չպահանջել իրենց ներդրումները.

Ⓣ չիրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ.

Ⓣ օժանդակել ընկերությանը՝ վերջինիս գործունեության իրականացման գործում:

Բաժնետերերն ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում:

V ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

34 Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ, կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս չափով: Եթե պահուստային հիմնադրամը արդյունքում կազմում է նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցների հաշվին:

Պահուստային հիմնադրամը օգտագործվում է ընկերության կորուստները ծածկելու, պարտատոմսերը մարելու և ընկերության բաժնետոմսերը ետ գնելու համար:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

Կարող են նախատեսվել նաև սպառման, կուտակման, շահաբաժինների վճարման և բաժնետերերի որոշմամբ այլ հիմնադրամներ:

VI ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ

35 Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի և ձևի համար հայտարարված շահաբաժինները դրամով կամ բաժնետերերի որոշմամբ նաև գույքով (մթերքով):

36 Շահաբաժինները վճարվում են ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

37 Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումը ընդունվում է ընկերության դիտորդների խորհրդի կողմից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի տարեկան շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումը ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դիտորդների խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահաբաժինների չափը չի կարող արդեն վճարված միջանկյալ շահաբաժինների չափից պակաս լինել:

38 Տարեկան շահաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է ընկերության դիտորդների խորհրդի միջանկյալ շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

VII ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

39 Ընկերությունը պարտավոր է ապահովել ռեեստրի՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով վարումը և պահպանումն ընկերության պետական գրանցման պահից մեկ ամսվա ընթացքում: Ընկերության ռեեստրը վարվում և պահպանվում է ընկերության կողմից կամ նրա հանձնարարությամբ համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից (ՀՀ ֆինանսների նախարարության Ազգային կենտրոնացված ռեեստր պետական ձեռնարկություն):

40 Ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնարարելու դեպքում ընկերությանը չի ազատում այն վարելու և պահպանելու համար ՀՀ իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից:

41 Բաժնետերերը, ինչպես նաև ընկերության այլ արժեթղթերի սեփականատերերը պարտավոր են ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները ժամանակին չներկայացնելու դեպքում, ընկերությունը և ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը, ինչպես նաև ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջը պատճառված վնասի համար:

42 Ռեեստրում գրառումը կատարվում է բաժնետիրոջ կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու օրվա ընթացքում:

43 Ընկերության բաժնետիրոջ կամ ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջ պահանջով ընկերության բաժնետերերի ռեեստր վարողը պարտավոր է նրանց ռեեստրից քաղվածք տրամադրել, որը արժեթուղթ չի հանդիսանում:

VII ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

44 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից մինչև վեց ամիս ժամկետում: Ընկերության տարեկան ժողովների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է 18 ամսից ավելի լինի:

Եթե ընկերության դիտորդների խորհուրդը սահմանված ժամկետում բաժնետերերի տարեկան ժողով չի գումարում, ապա դրա գումարումն ու անցկացումը կարող է կազմակերպվել ձեռնարկությունների գրանցումն իրականացնող պետական մարմնի կողմից:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

45 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները՝

ա .ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (ծայների 3/4-ով) .

բ .ընկերության վերակազմավորումը ((ծայների 3/4-ով՝ դիտորդների դիտորդների խորհրդի ներկայացմամբ).

գ .ընկերության լուծարումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը (ծայների 3/4-ով) .

դ .ընկերության դիտորդների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության դիտորդների խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկում են բացառապես ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության դիտորդների խորհրդի անդամների ընտրության հարցն ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում

է ընդունել ընկերության դիտորդների խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

Ե. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

Գ. բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը.

Դ. բաժնետոմսերի անվանական արժեքի պակասեցման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը.

Ղ. ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը, գործունեության կարգի, վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերի, պայմանների սահմանումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցն ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

Ք. ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում:

Ժ. ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

Ժա. ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ մամուլին համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով (հաշվապահական հաշվառման անհրաժեշտ տվյալների և ընկերության արտադրատնտեսական գործունեության հաշվետվություն) (դիտորդների խորհրդի ներկայացմամբ).

Ժբ. ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին (ծայների 3/4-ով` դիտորդների խորհրդի ներկայացմամբ).

Ժգ. ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետ գնումը (դիտորդների խորհրդի ներկայացմամբ).

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար ընկերության դիտորդների խորհրդին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք ՀՀ „Բաժնետիրական ընկերությունների մասին,, օրենքով չեն սահմանվել որպես ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն:

46 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են ժողովին մասնակցող ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ծայների պարզ մեծամասնությամբ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումներն, որոշում ընդունելու պահից, 45 օրվա ընթացքում պետք է հաղորդվեն բաժնետերերին: Բաժնետերերը իրավունք ունեն դատական կարգով գանգատարկել ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նրանք չեն մասնակցել ժողովին կամ այդ որոշմանը դեմ են քվեարկել և որոշմամբ խախտվել են նրանց օրինական շահերը և իրավունքները:

47 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հեռակա կարգով քվեարկության ընդունվող որոշումները` կարող են ընդունվել առանց ժողովի գումարման` հարցման միջոցով: Սույն կանոնադրության 45 կետի **Ժա** ենթակետի սահմանված հարցի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասու է, եթե քվեարկությանը մասնակցել են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն կեսին տիրապետող բաժնետերերը:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացված քվեաթերթիկները ընկերության կողմից ընդունելը ավարտելու պահից առնվազն 30 օր շուտ:

48 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն ընկերության տեղաբաշխված սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, իրենց պատկանող լրիվ վճարված սովորական բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև ընկերության բաժնետեր չհանդիսացող ընկերության դիտորդների խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթվից առնվազն 45 օր շուտ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանական սեփականատերը պարտավոր է ցուցակը կազմելու ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

Ընկերության բաժնետիրոջ պահանջով ընկերությունը պարտավոր է տեղեկություններ տրամադրել բաժնետերերին ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրան ընդգրկելու մասին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են արվել միայն ցուցակի կազմման ընթացքում թույլ տրված սխալների ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքների և շահերի վերականգնման նպատակով:

49 Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ընդհանուր ժողովի գումարման մասին տեղեկացվում են գրավոր ծանուցում ուղարկելու կամ այն հրապարակելու միջոցով: Ընդհանուր ժողովի գումարման պետք է ծանուցվի գումարման օրվանից 30 օր շուտ, որով բաժնետերերին տեղեկացվում է ժողովի գումարման վայրը, օրը ժամը, ընդգրկված հարցերը:

Ընկերության ժողովի գումարման մասին գրավոր ծանուցվում է վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը), ինչպես նաև ընկերության աուդիտն իրականացնող անձը, եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերին:

50 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

Ⓜ ընկերության տարեկան հաշվետվությունը.

Ⓜ ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), կամ ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

Ⓜ տեղեկություններ ընկերության դիտորդների խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), առաջադրվող թեկնածությունների մասին.

Ⓜ ընկերության կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ ընկերության կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:

Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում ներկայացվելիք այլ տեղեկություններ և նյութեր:

51 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում է սույն կանոնադրական 50-րդ կետով սահմանված տեղեկությունները և նյութերը:

52 Ընկերության բաժնետերը, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի բաժնետեր է հանդիսանում, ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել ընկերության դիտորդների խորհրդին խորհրդին տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել ընկերության դիտորդների խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) ազգանունը և անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի:

Ընկերության դիտորդների խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկությունները և ընդունում համապատասխան որոշում արված առաջարկությունները ընդհանուր ժողովում քննարկման դնելու մասին:

53 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում ընկերության դիտորդների խորհուրդը որոշում է՝

⑩ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը.

⑩ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.

⑩ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

⑩ բաժնետերերին ընկերության բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

⑩ քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

54 Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է ընկերության դիտորդների խորհրդի որոշմամբ, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), կամ ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջ ներկայացնելու գրությամբ առնվազն 10 տոկոսի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով:

55 Քսանհինգից ավելի ձայնի իրավունք ունեցող ընկերությունում ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ կարող են լինել ընկերության դիտորդների խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի անդամները, տնօրենը և վարչության անդամները:

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ընդհանուր ժողովի քվորումը, ապահովում է քվեարկության սահմանված կարգը, քվեարկության մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն և ընկերության արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

56 Ընկերության բաժնետերը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

57 Ընկերության ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողով: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Նոր ժողովն իրավասու է եթե մասնակցող բաժնետերերը տիրապետում են բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

58 Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է „ընկերության մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս՝ մեկ ձայն,, իրավունք սկզբունքով:

Քսանհինգից ավելի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր ունեցող բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, որի ձևը և բովանդակությունը հաստատվում է ընկերության դիտորդների խորհրդի որոշմամբ:

Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կամ նրա ֆունկցիաները իրականացնող անձի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, այն ստորագրվելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմրսվում և հանձնվում են ընկերության արխիվ պահպանության: Քվեարկության մասին արձանագրությունը կցվում է ընդհանուր ժողովի արձանագրությանը, որին ծանոթանալու իրավունք ունեն բաժնետերերը:

59 Ընկերության ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի փակումից 15 օրվա ընթացքում, երկու օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ծանոթանալու ընդհանուր ժողովի արձանագրություններին:

60 Ընկերության դիտորդների խորհուրդը իրականացնում է՝

Պընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերվում են ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը.

Պընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերության դիտորդների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել վարձատրություն կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են դիտորդների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

61 Ընկերության դիտորդների խորհրդի իրավասություններն են՝

ա . գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ . ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր և արտահերթ ժողովի գումարման և դրանց օրակարգի հաստատումը.

գ . ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ.

դ . սույն կանոնադրության 45 կետում նշված հարցերի ներկայացումն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.

ե . պարտատոմսերի և արժեթղթերի տեղաբաշխումը.

զ . գույքի շուկայական արժեքի որոշումը.

է . բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացումը կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը

ը . ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, արժեթղթերի ձեռքբերման և գնման հարցերի նախապատրաստումը ընդհանուր ժողովի քննարկմանը

թ . ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի վճարման կարգը և պայմանները.

ժ . ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի վճարման կարգի վերաբերյալ ընդհանուր ժողովի առաջարկությունների նախապատրաստումը.

ժա . ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժբ . ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը.

ժգ . ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժդ . ընկերության գործադիր մարմնի (տնօրենի, վարչության) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի և վարչության վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները

ժե . ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը

ժզ . ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը.

ժէ . այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք (որոշում ընդունելու պահին ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոս կազմող արժեք) չի ներկայացնում.

ժը . ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

ժթ . ընկերության կողմից դուստր ընկերությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը.

Ընկերության դիտորդների խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Խոշոր գործարքի կատարման մասին որոշումը պետք է ընդունվի ընկերության դիտորդների խորհրդի կողմից միաձայն, հակառակ դեպքում դիտորդների խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

62 Ընկերության դիտորդների խորհրդի անդամները ընտրվում են ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում մեկ տարի ժամկետով:

Ընկերության դիտորդների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել ընկերության դիտորդների խորհրդի կազմում, կամ ընկերության դիտորդների խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:

Յուրաքանչյուր բաժնետեր ընկերության դիտորդների խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Ընկերության դիտորդների խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները, բայց ոչ պակաս քան ժողովում ներկայացված ձայների պարզ մեծամասնությունը:

Ընկերության դիտորդների խորհրդի քանակական կազմը սահմանվում է 10 հոգուց:

Ընկերության դիտորդների խորհրդի անդամ կարող են լինել ինչպես բաժնետեր հանդիսացող, այնպես էլ ընկերության բաժնետեր չհանդիսացող գործունակ ֆիզիկական անձինք:

Ընկերության գործադիր մարմնի (տնօրենը, վարչությունը) ներկայացուցիչները չեն կարող ընկերության դիտորդների խորհրդի կազմում մեծամասնություն կազմել:

63 Ընկերության դիտորդների խորհրդի նախագահն ընտրվում է ընկերության դիտորդների խորհրդի անդամների կողմից, դիտորդների խորհրդի անդամների ընդհանուր ձայների քանակի մեծամասնությամբ:

Ընկերության դիտորդների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին, կամ ընտրել նոր նախագահի դիտորդների խորհրդի անդամների ընդհանուր ձայների քանակի մեծամասնությամբ:

Ընկերության դիտորդների խորհրդի նախագահը կազմակերպում է ընկերության դիտորդների խորհրդի աշխատանքները, գումարում է դիտորդների խորհրդի նիստերը և նախագահում է դրանցում: Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

Ընկերության դիտորդների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները ընկերության դիտորդների խորհրդի որոշմամբ կատարվում է ընկերության դիտորդների խորհրդի անդամներից որևէ մեկը:

64 Ընկերության դիտորդների խորհրդի նիստերը գումարվում են ինչպես ընկերության դիտորդների խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, այնպես էլ դիտորդների խորհրդի անդամի, վերստուգողի, աուդիտն իրականացնող անձի, տնօրենի պահանջով:

Դիտորդների խորհրդի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են դիտորդների խորհրդի անդամների կեսից ավելին և դիտորդների խորհրդի որոշումները ընդունվում են դիտորդների խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

Քվեարկության ժամանակ դիտորդների խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն ընկերության դիտորդների խորհրդի մեկ անդամից դիտորդների խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում:

Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում դիտորդների խորհրդի նախագահը ունի որոշիչ ձայնի իրավունք:

Ընկերության դիտորդների խորհրդի նիստերը արձանագրվում են նիստի ավարտից 10 օրյա ժամկետում:

Նիստի արձանագրությունը ստորագրվում է նիստի նախագահի կողմից, որը և պատասխանատու է արձանագրության ճշտության համար:

65 Ընկերության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը:

Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ վերը նշված ընկերության ընդհանուր ժողովի և դիտորդների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը:

Ընկերության տնօրենի հետ պայմանագիրը կնքում է ընկերության դիտորդների խորհրդի նախագահը, եթե դիտորդների խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները զբաղեցնում է միևնույն անձը, ապա պայմանագիր տնօրենի հետ կնքում է ընկերության դիտորդների խորհրդի որոշմամբ դիտորդների խորհրդի անդամներից մեկը:

66 Ընկերության գործադիր մարմինը, ընկերության տնօրենը՝

• ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, ընկերության վարչության հետ համատեղ. ընկերության տնօրենը միաժամանակ հանդիսանում է նաև ընկերության վարչության նախագահը.

Ընկերության տնօրենը՝

ա . տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

բ . առանց լիազորագրի գործում է ընկերության անունից.

գ . ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

դ . սահմանված կարգով կնքում է պայմանագիր, այդ թվում աշխատանքային.

ե . տալիս է լիազորագրեր.

զ . բանկային հիմնարկներում բաց է անում ընկերության հաշվարկային (այդ թվում տարադրամային) և այլ հաշիվներ:

է . ընկերության դիտորդների խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը և ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը.

ը . իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս ցուցումներ և ստուգում դրանց կատարումը.

թ . ապահովում է աշխատողների կողմից աշխատանքային ներքին կարգապահական կանոնների պահպանումը.

ժ . սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում աշխատանքից ընկերության աշխատողներին.

ժա . աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

• ընկերության վարչությունը ներառում է ընկերության տնօրենին, նրա տեղակալներին, գլխավոր հաշվապահին ինչպես նաև ընկերության գործունեությունը կարգավորող այլ վարժու աշխատողներին:

67 Ընկերության դիտորդների խորհրդի անդամները, տնօրենը և վարչության անդամները իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով ընկերության շահերից, նրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են ընկերության դիտորդների խորհրդի կամ վարչության այն անդամները, որոնք ընկերությանը վնասներ պատճառված որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

IX ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

68 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է վերստուգող հանձնաժողովը, որը ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի նախագահը ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

Վեաստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ընկերության բաժնետեր հանդիսացող գործունակ ֆիզիկական անձինք:

Վեաստուգող հանձնաժողովը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ դիտորդների խորհրդի որոշմամբ, ինչպես նաև ընկերության ձայների իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վեաստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է տրամադրվեն ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը բացատրությունները:

Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

69 Ընկերության գործադիր մարմինը պատասխանատվություն է կրում ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի, հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունը պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունների համար:

Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման ընկերության դիտորդների խորհրդի կողմից, ընկերության ընդհանուր ժողովում քննարկելուց 30 օր առաջ:

70 Ընկերությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պահպանել՝

Պ ընկերության հաստատված կանոնադրությունը, նրանում կատարված լրացումները, փոփոխությունները, նոր խմբագրությամբ կանոնադրությունը.

Պ ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ ընկերության գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերը.

Պ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և կառավարման կողմից հաստատված ընկերության ներքին փաստաթղթերը.

Պ ընկերության տարեկան հաշվետվությունները.

Պ ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերը.

Պ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը.

Պ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվապահական և վիճակագրական հաշվետվության փաստաթղթերը.

Պ ընկերության ընդհանուր ժողովի, դիտորդների խորհրդի և վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, քվեաթերթիկները.

Պ ընկերության վերստուգող հանձնաժողովի, աուդիտի իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները:

Ընկերությունը բաժնետերերի պահանջով պարտավոր է նրանց հնարավորություն ընձեռել ծանոթանալու վերը նշված փաստաթղթերին և հինգօրյա ժամկետում նրանց տրամադրել փաստաթղթերի պատճեն, բացառությամբ հաշվապահական հաշվառման և ընկերության վարչության նիստերի արձանագրությունների:

Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճեն:

71 Ընկերությունը պարտավոր է մասսայական լրատվության միջոցներով հրապարակել՝

Ⓢ ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշիվը.

Ⓣ բաժնետոմսերի թողարկման ազդագիրը.

Ⓡ ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը:

72 Ընկերության լուծարումը՝ հանգեցնում է ընկերության դադարմանը առանց ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ⓢ Ընկերության լուծարման հիմքերն են՝

ա . ընկերության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ժամկետի լրանալը կամ այն նպատակին հասնելը, հանուն որի ընկերությունը ստեղծել էր, կամ դատարանի ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը.

բ . ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ընկերության առանց իրավահաջորդի լուծարման մասին ընդունված որոշումը (ծայների 2/3 – ով , դիտորդների խորհրդի ներկայացմամբ).

գ . ընկերության վերակազմավորումը.

դ . ընկերությունը սնանկ հայտարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը.

ե . ընկերությունը լուծարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախքան լուծարման մասին որոշումն ընդունելը, հաստատում է դիտորդների խորհրդի կողմից ներկայացված ընկերության ամփոփիչ հաշվեկշիռը և ընկերության լուծարման նախագիծը:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը ենթակա է գրանցման և համաձայնեցման ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշման պետական գրանցման պահից նրան են փոխանցվում լուծարվող ընկերության կառավարման մարմինների գործունեության վերահսկման բոլոր լիազորություններն ընկերության գույքի տնօրինման հարցում:

Լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:

Առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում:

Ընկերության լուծարային հանձնաժողովի անդամների կազմը և լիազորությունների շրջանակը ենթակա է գրանցման ձեռնարկությունների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

Ընկերության լուծարումն իրականացվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում հաստատված լուծարման նախագծին համապատասխան:

Լուծարային հանձնաժողովն առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցներով հայտարարություն է տալիս ընկերության լուծարման և ընկերության պարտատերերի կողմից պահանջների կարգի և ժամկետի մասին, վերջինս պետք է սահմանվի հայտարարության հրապարակման պահից 2-ից մինչև 6 ամսվա սահմաններում, և այդ մասին ծանուցվում է պետական գրանցումն իրականացնող մարմնին: